ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Shirak Centre of Armenological Studies NAS RA

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ НАУЧНЫЕ ТРУДЫ SCIENTIFIC WORKS

ՀԱՏՈՐ ВЫПУСК EDITION 23 2020 № 1

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ИСТОРИЯ
HISTORY

ՀՏԴ՝ 93.94

# ԽՈՏՈՐՋՈՒՐՑԻՆԵՐԻ ՊԱՅՔԱՐՆ ԱՎԱԶԱԿԱԽՄԲԵՐԻ ԴԵՄ XIX ԴԱՐԻ II ԿԵՍԻՆ

*Արկադի Ակոպով*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

**Բանալի բառեր՝** *Հյուսեին բեգ, Դուրսուն բեգ, լազեր, մեծավոր, տեր Կարապետ Չախալյան, Տայք, հայ կաթոլիկներ:*

Ուսումնասիրությունը նվիրված է պատմական Տայք աշխարհի արևմտյան հատվածում՝ Ճորոխ գետի ձախ ափին ընկած Խոտորջուր կոչվող գյուղախմբի՝ օսմանյան կառավարության հովանավորությամբ գործող ավազակախմբերի դեմ պայքարին: Ավազակախմբերը, որոնք Խոտորջուրի դեմ գործել էին դեռևս XVIII դարից սկսած,նոր թափ են հավաքում XIX դարի II կեսին: Միմյանց հաջորդում են Շարիֆօղլի Հյուսեին բեգի, Թույլօղլի Դուրսուն բեգի ավազակախմբերը, որոնց դեմ պայքարում խոտորջուրցիները ստիպված են լինում դիմել ինչպես խորամանկ քայլերի, այնպես էլ բացառիկ անձնազոհության:

***Նախաբան.*** Ճորոխի ձախ ափին գտնվող Խոտորջուր[1] կոչվող գյուղախումբը առաջին անգամ հիշատակվում է XVI դարի սկզբնաղբյուրներում[2]: XIXդ.

[1] Խոտորջուրի տարածքը մինչև VIII դարը պատկանել է Մամիկոնյաններին, այնուհետև՝ Բագրատունիներին, իսկ XIII-XVI դարերում ընդգրկված է եղել Սամցխեի աթաբեկության կազմի մեջ: Ղ. Ինճիճյանն այսպես է նկարագրում Խոտորջուրը. «Ցրտուի օդոյ սրա ի լեռնային վայրս, գրեթէ նման է գաւառին Էրզիռումայ, իսկ ի ձորավայրս առաւել ջերմ է քան զնորայն: Երկիրն լեռնային և ապառաժուտ, ունի և ձոր բազում և լերինս հողային, յորս բազում աղբերակունք գտանին քաղցր և պատուական ջուրց. այլ և խոտաւէտ արօտս անասնոց. ի տեղիս տեղիս ունի և անտառ

երկրորդ կեսին այն ընդգրկված էր Օսմանյան կայսրության Էրզրումի նահանգի Կիսկիմի (Բերդագրակի) գավառակի մեջ, բաղկացած էր ինը հիմնական գյուղերից՝ Ճիճապաղ, Կրման, Կիսակ, Միջինթաղ, Խնդաձոր, Սունինց, Կախմուխուտ, Վահնա, Քեղուտ-Ցուցուլա և երկու փոքր թաղամասերից՝ Արեգի ու Մասրուտ: Գյուղախմբին էին պատկանում նաև 33 բարեշեն ամառանոցները և 10 ձմեռանոցները[3]:

Շնորհիվ Խոտորջուրի հայ կաթոլիկ բնակչության՝ Կիսկիմի և հարևան գավառների կրոնափոխ հայերը՝ կեսկեսները, տևական ժամանակ չէին խզում քրիստոնեության հետ հոգևոր կապը և գաղտնի գալիս էին Խոտորջուր՝ ծեսեր կատարելու: Ինչպես խոտորջուրցին էր ասում. «Նրանց մի ոտքը ժամի մեջ էր, մյուսը ջամին (մզկիթ) էր մտել»[4]:

Խոտորջուրի վարչական և հոգևոր ղեկավարները միշտ եղել են ընտրովի և անպայման խոտորջուրցի: Ընդհանուր ժողովը համարվում էր Խոտորջուրի համայնքի գերագույն մարմինը, որտեղ քննության էին առնվում Խոտորջուրի 9 գյուղերին վերաբերող առավել կարևոր հարցերը: Խոտորջուրի կառավարչական գործառույթ իրականացնելու համար ժողովն ընտրում էր մի հոգևորականի, որին անվանում էին «մեծավոր»[5]:

Խոտորջուրի բնակչության թվի վերաբերյալ կան տարբեր վկայություններ: Համաձայն Ղ.Ալիշանի՝ XIX դ. կեսերին գյուղախմբի բնակչության թիվը կազմում էր «400 տունք եւ 2000 կամ աւելի ոգիք»[6]: Երեք տասնամյակ անց՝ 1878թ., Գ.Սրվանձտյանի հաղորդմամբ, Խոտորջուրում ընդհանուր առմամբ կար 642 տուն՝ 5650 բնակչով[7]: Իրենց կենցաղով խոտորջուրցիները շատ ավելի բարձր էին կանգնած հարևան գյուղերի բնակիչներից, չնայած այն հանգամանքին, որ Խոտորջուրի հողը հազիվ կբավարարեր 200 տուն բնակչությանը

---

զանազան ծառոց: Բաց ի Հայոց օտար ազգ ոչ գտանի ի Խոտրջուր...» (Տե՛ս **Ինճիճեան Ղ.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մաս Ա, հ. Ա, Ասիա, Վենետիկ, 1806, էջ 133):

[2] ոսմալՐրո ՐՐՐՐՐՐ ՐՐ ՐՐՐՐՐՐ ՐՐՐՐՐՐՐՐ (XVI-XVIII ՐՐՐՐՐՐՐՐՐՐ), ոսմալՐրո ՐՐՐՐՐ ՐՐՐՐՐՐՐՐ ՐՐՐՐՐՐՐՐ, ՐՐՐՐՐՐ, ՐՐՐՐՐ ՐՐՐՐՐՐՐՐՐՐ ՐՐՐՐՐՐՐՐՐՐՐՐՐՐ ՐՐՐՐՐՐՐՐՐՐՐՐՐՐ ՐՐՐՐՐՐՐՐՐՐՐՐՐՐ ՐՐՐՐՐՐՐՐՐՐՐՐՐՐ ՐՐՐՐՐՐՐՐՐՐՐՐՐՐ, ՐՐՐՐՐՐՐՐՐՐՐՐՐՐ

գյուղական հանգիստ կյանք վարելու համար: Այդ պատճառով գրեթե բոլոր խոտորջուրցի տղամարդիկ, պատանեկությունից սկսած մինչև ծերություն, կյանքի մեծագույն մասն անցկացնում էին պանդխտության մեջ[8]:

Խոտորջուրը նշանակալի դեր է խաղացել նաև հարևան մահմեդական գյուղերի քաղաքական և մշակութային կյանքում: Կիսկիմի գավառի միակ թուրքական դպրոցը կառուցված էր խոտորջուրցիների ծախսերով: Գավառի փաստացի կենտրոն Արսիս խմելու ջուր բերելու համար էլ տեղացի մահմեդականները դիմել էին Խոտորջուրի նյութական օգնությանը[9]:

Խոտորջուրի պատմությանը կարևորագույն մի հատված նվիրված է ավազակախմբերի դեմ մղած համառ պայքարին՝ լի անձնազոհության, նյութական զրկանքների և խիզախության դրվագներով: Այդ պայքարում խոտորջուրցին թեպետ չի ենթարկվել զանգվածային կոտորածների, սակայն հույժ ծանր է եղել նրա համար: Դեռևս XVIII դ. սկսված ավազակային ասպատակությունները շարունակվում են նաև XIX դ. առաջին կեսին: Ծանր պայքարի արդյունքում մեծավոր տեր Կարապետ Ա Չախալյանին հաջողվում է մինչև 1840թ. շոշափելի առավելության հասնել ավազակապետեր Կիսլանչու, Կրճելի, Կարա-դերելի Օնբաշու նկատմամբ և 1840-1860-ական թթ. Խոտորջուրի բնակչության համար բարենպաստ պայմաններ ապահովել[10]:

Խոտորջուրի դեմ գործող ավազակախմբերը գլխավորապես կազմված էին լազերից, որոնք, սակայն, այնքան արյունարբու չէին, որքան Արևմտյան Հայաստանի մյուս շրջանները կեղեքող թուրքերը և քրդերը[11]:

### *Հունուտցի Հյուսեին բեկի ավազակախումբը*

1870-ական թթ. վերջերին՝ Աբդուլ Համիդ II-ի գահակալության առաջին իսկ տարիներից սկսած, ակտիվացավ ավազակախմբերի գործունեությունը Խոտորջուրի դեմ: Այդ ժամանակաշրջանում Ճորոխի հովտում սկսեց գործել Շարիֆօղլի Հյուսեին բեգը, որի ավազակախումբը բաղկացած էր ավելի քան հարյուր հիսուն անդամներից՝ մեծամասամբ բանտերից փախած ոճրագործներից և դասալիք զինվորականներից: Ինքը՝ Հյուսեին բեգը, Խոտորջուրի հարավարևմտյան հարևան Հունուտ գյուղից էր[12]:

Հետզհետե Շարիֆօղլու ավազակախումբը կատարյալ չարիք է դառնում Էրզրումի նահանգի Սպերի, Թորթումի և Կիսկիմի գավառների գյուղերի քրիստոնյաների գլխին: Կարինի Մելքիսեդեկ եպիսկոպոսին գրած նամակ-խնդրա-

[8] «Տեղագրութիւն Խոտրջրոյ», Բազմավէպ հանդիսարան, Վենետիկ, 1875, հ. ԼԳ, էջ 334:
[9] ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 24, թ. 3:
[10] ՀԱԱ, ֆ. 1407, ց. 2, գ. 17, թ. 2:
[11] ՀԱԱ, ֆ.1407, ց.2, գ.17, թ. 1:
[12] ՀԱԱ, ֆ.1407, ց.2, գ.17, թ. 4:

գրում խոտորջուրցիները հայտնում են, որ «աւազակները կողոպտել են և վիրաւորել Խանթաձորի տէր Անտօն քահանային և այնուհետև բոլոր ճանապարհները բռնելով, անցնող եկողներին կողոպտում են. մանավանդ սիրում են թալանել Թիֆլիսից եկողներին, որովհետև սոքա շատ փողով են գալիս»[13]: Անհրաժեշտ է փաստել, որ ավազակախումբը չէր խնայում նաև մահմեդականներին: Հյուսեին բեգի ասպատակություններից զերծ չէր մնում նաև իր հայրենի Հունուտ գյուղը, որտեղ իր խմբով հանգստանում էր ավազակային հարձակումներից հետո, ինչպես նաև ձմռան ամիսներին: Վերջապես թալանի մեծ մասը Հունուտում և հունուտցիների միջոցով էր պարտակվում կամ գնում հեռավոր շուկաներում իրացվելու: Հաջող «արշավանքներից» հետո Հյուսեին բեգը սիրում էր անզուսպ խրախճանքներ սարքել Հունուտի անտառներում, անգամ Էրզրումից անառակներ էր բերել տալիս և օրերով անձնատուր լինում վայելքներին[14]: Հայտնի կնամոլը 1878 թ. ամռանը որոշում է ավազակային հարձակումը զուգակցել Խոտորջուրում իր գեղեցկությամբ հայտնի խանդաձորցի մի երիտասարդ կնոջ՝ Մարիամի առևանգմամբ: Վերջինիս ամուսինը Ռուսաստանի Ստավրոպոլ քաղաքում հացագործությամբ էր զբաղվում: Ավազակապետն իմանում է, որ գեղեցկուհին տանը մենակ է: Իր մի խումբ հանցակիցների հետ Հյուսեինը օգոստոսի 29-ի գիշերը փորձում է իրականացնել իր շնաբարո ծրագիրը, սակայն երիտասարդ հայուհին, ավազակների համար անսպասելիորեն, դիմադրություն է ցուցաբերում: Ավազակներից երկուսի կացնահար ընկնելուց հետո ավազակապետը ատրճանակով դիմահար կրակում և սպանում է Մարիամին[15]: Այս ամենից հետո ավազակախումբը թալանում է Խանդաձորը, այրում ավելի քան 150 տուն՝ գույքով հանդերձ, որից հետո հեռանում Հունուտ[16]:

Խոտորջուրցիներն այս հանցագործության մասին Էրզումում գտնվող մեծավոր տեր Կարապետ Բ Չախալյանին լուր են հասցնում արագոտն ճիճապաղցի Բաղդասար Փիրազյանի միջոցով, որը երկու օրում հասնում է Էրզրում: Մեծավորը, իր հերթին, բողոքում է Կ.Պոլիս: Աբդուլ-Համիդի հրամանով Էրզրումի նահանգապետին տրվում են լայն լիազորություններ ավազակախումբը վնասազերծելու համար: Շատ շուտով Շարիֆօղլին իր հանցակիցների հետ ձերբակալվում է[17]: Հյուսեին բեգը իր հրոսակների հետ 101 տարվա ազատա-

---

[13] **Երիցյան Ա.**, Մի երես Կարնոյ նորագոյն պատմութիւնից // Փորձ, Տփխիս, 1878, N 1, էջ 194:

[14] ՀԱԱ, ֆ.1407, ց.2, գ.17, թ. 5:

[15] ՀԱԱ, ֆ.1407, ց.2, գ.17, թ. 7-8: Հմմտ. **Երիցյան Ա.**, նշվ. աշխ., էջ 193- 194:

[16] **Երիցյան Ա.**, նշվ. աշխ., էջ 194: Մելքիսեդեկ եպիսկոպոսին ուղղված նամակից իմանում ենք, որ Հյուսեին բեգի խմբի կազմում են եղել նրա եղբայր Խաշիղը, Ռիզեցի Թույլօղլիները, Կարադերելի Օնբաշին իր արբանյակներով: Վերջինս իր ավազակային գործունեությամբ աչքի էր ընկնում դեռևս 1860-ական թթ.:

[17] ՀԱԱ, ֆ.1407, ց.2, գ.17, թ. 9:

զրկման է դատապարտվում, սակայն պատիժը կրելու վայր՝ Սինոպ փոխադրվելիս, Բաբերդի մոտակայքում Հյուսեին բեգը իր 14 արբանյակների հետ փախչում է և ամբողջ խմբով դիմում դեպի Հունուտ, որտեղ պահվում էին նրա զենքերի պաշարները և տնտեսության մեծ մասը[18]: Կարելի է ենթադրել, որ ավազակապետի ձերբակալությունը և դատավարությունը լոկ լավ կազմակերպված բեմադրություն էր, քանի որ փախուստից հետո Հյուսեին բեգը շարունակում է անպատիժ թալանել Ճորոխի ավազանի գյուղերը:

Իմանալով Հյուսեին բեգի փախուստի մասին՝ մեծավորը համոզում է նրանից դժգոհ մահմեդականներին՝ ցուցադրաբար քոչեն՝ ընդհանուր անապահովության և ավազակախմբերի սիստեմատիկ ասպատակությունների հետևանքով այլևս Օսմանյան կայսրությունում մնալու անկարողության պատճառվակով: Ընդ որում՝ մահմեդականների վերաբնակեցման համար ընտրվում են Սան-Ստեֆանոյի պայմանագրով Ռուսական կայսրությանն անցած Օլթիի և Նարիմանի շրջանները: Մեծավորի այս խորամանկ քայլը կատարյալ հաջողություն է ունենում: Տեղական պաշտոնյաները վախենում են բանտից փախած ոճրագործներին այլևս բացահայտ աջակցություն ցուցաբերելուց: Էրզրումի նահանգապետի ներկայացուցիչների հետ ունեցած զրույցից հետո Շարիֆօղլին հակվում է իր գործունեությունը Վանի կամ Բիթլիսի նահանգներ տեղափոխելու: Սակայն քոչելուց առաջ որոշում է մի վերջին անգամ էլ հարձակվել Խոտորջուրի վրա[19]:

Մեծավորը, իմանալով Հյուսեինի պլանների մասին, անմիջապես հրավիրում է ընդհանուր ժողով և հանգամանորեն զեկուցում ժողովրդին ավազակապետի ծրագրերի մասին[20]: Տեսնելով, որ բոլոր օրինական միջոցներն այլևս ի զորու չեն լուծելու Հյուսեին բեգի ավազակախմբի խնդիրը և վերականգնելու անդորրը՝ մեծավորը կաշառում է ավազակապետի մերձավորներին, որոնցից մեկը՝ Չերքեզ օնբաշին, իր ձեռքով կտրում է Հյուսեին բեգի գլուխն ու հանձնում տեր Կարապետ Բ Չախալյանին[21]:

Այսպիսով, Շարիֆօղլի Հյուսեին բեգի ավազակախմբի դեմ պայքարն ավարտվեց խոտորջուրցիների հաղթանակով և բեգի վնասազերծմամբ: Այն ցույց տվեց, որ հայտնվելով բարդ կացության մեջ և օգնություն չստանալով ավազակներին բացահայտ կամ գաղտնի աջակցող իշխանական վերնախավից՝

[18] ՀԱԱ, ֆ.1407, ց.2, գ.17, թ. 14:
[19] ՀԱԱ, ֆ.1407, ց.2, գ.17, թ. 15-16:
[20] ՀԱԱ, ֆ.1407, ց.2, գ.17, թ. 18: Վերոնշյալ ժողովից հետո մի քանի տասնյակ ընտանիք Խոտորջուրից անցնում է Կարսի մարզ և այնտեղ հիմնում Ղարախաչ գյուղը:
[21] ՀԱԱ, ֆ.1407, ց.2, գ.17, թ. 20-21:

խոտորջուրցին կարողացել է արդյունավետ օգտագործել պայքարի այլ ընտրանքային եղանակները:

### *Թույլօղլի Դուրսուն բեգի ավազակախումբը*

Հյուսեին բեգի վնասազերծումից հետո չնայած այն հանգամանքին, որ Խոտորջուրը որոշ ժամանակ օգտվում էր հարաբերական խաղաղությունից, այսուհանդերձ ավազակախումբը չէր ցրվել, այլ ղեկավար կազմի մեջ վերադասավորումների գործընթացին զուգահեռ, հայերի հարստահարման նոր ուղիներ էր որոնում: 1880-ական թթ. սկզբին Էրզրումի նահանգի ղեկավարության համաձայնությամբ Հյուսեին բեգի ավազակախմբի գլուխ կանգնեց ազգությամբ լազ ռիզեցի Թույլօղլի Դուրսուն բեգը: Վերջինս օրենքից դուրս էր հայտարարված Տրապիզոնում, սակայն Հյուսեին բեգի միջնորդությամբ Էրզրումի վիլայեթի ղեկավարության հովանավորությանն էր արժանացել և իր ելուզակների հետ տեղափոխվել էր Ճորոխի ավազան՝ դառնալով Հյուսեին բեգի արբանյակը, իսկ նրա մահից հետո՝ ավազակախմբի պարագլուխը:

Դուրսուն բեգը, «ավանդական եղանակով» ասպատակելով քրիստոնյա և մահմեդական գյուղերը, Խոտորջուրի նկատմամբ սկսում է կիրառել թալանի ուրույն ձև, այն է՝ «վրա ձգած» ապրանքներ պարտադրել: Առաջին անգամ նա իր հետ է բերում 500 նոխազ՝ խոտորջուրցիներին խնդրելով իրար մեջ դրանք բաժանել՝ աշնանը գումարը վճարելու պայմանով, իսկ երկրորդ անգամ՝ ակցիզը չվճարած ծխախոտ է պարտադրում[22]: Այս խնդրին լուծում տալու համար խոտորջուրցիները դիմում են Կարին՝ իրենց նշանավոր հայրենակից՝ օսմանյան ֆինանսական բարձրաստիճան պաշտոնյա Գրիգոր Շարանյանին և հայ կաթոլիկների հոգևոր առաջնորդին: Պատասխանը լինում է՝ «Ի սեր Աստծո, զենքի չդիմել…», քանի որ կաթոլիկ հայության նկատմամբ հանդուրժող Օսմանյան կայսրությունը չի հանդուրժի հայերի զինված ելույթ՝ թեկուզ ավազակների դեմ[23]: Նույնը հորդորում են նաև խոտորջուրցիների բարձրաստիճան բարեկամները Կ.Պոլսից[24]:

Սակայն Դուրսուն բեգը դրանով չի բավարարվում: 1886 թ. նա վերջնագիր է ներկայացնում Խոտորջուրին՝ պահանջելով, որ իրեն ճանաչեն Խոտորջուրի ավատական իշխան և հարևանների նման վճարեն բեգական տուրք՝ դրա դիմաց խոստանալով հաղորդակցության ապահով միջոցներ[25]: Ակնհայտ է, որ այս առաջարկը բխում էր ոչ միայն ավազակապետի շահերից: Ըստ էության,

---

[22] Տե՛ս **Գևորգյան Թ.**, նշվ. աշխ., էջ 211: Հմմտ. ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 17(1), էջ 30: Ակցիզը չվճարած ծխախոտի գործածությունն Օսմանյան կայսրությունում խստիվ արգելված էր:

[23] ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 17(1), էջ 31:

[24] Տե՛ս **Գևորգյան Թ.**, նշվ. աշխ., էջ 211

[25] ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 17(1), էջ 32:

այս առաջարկից բխող իրավիճակի՝ այն է Խոտորջուրի կիսանկախ վիճակի վերացման գլխավոր շահառուն էին դառնալու Օսմանյան կայսրությունը և մասնավորապես Էրզրումի նահանգապետը: Դրանով է պայմանավորված նաև այն հանդուրժողականությունը, որը դրսևորվում էր անձամբ Դուրսուն բեգի նկատմամբ: Բացի այդ, Դուրսուն բեգն իր հեռատեսությամբ և դիվանագիտական կարողություններով, ժուժկալությամբ, մաքրակենցաղ և մոլորություններից հեռու կենսակերպով[26] վստահելի գործընկեր էր ընկալվում Էրզրումի նահանգի ղեկավարության մոտ:

Դուրսուն բեգի պահանջին պատասխանելու համար Խոտորջուրի թաղերի ընդհանուր ժողով է գումարվում, որը որոշում է մերժել ավազակապետի պահանջը: Հասկանալի էր, որ Դուրսուն բեգը հանգիստ չէր թողնելու գյուղախումբը, ուստի որոշվում է դիմադրություն կազմակերպել: Խոտորջուրում կռվի ժամանակ բոլոր տղամարդիկ, ներառյալ պատանիները, երեք օրվա պաշարով և զենքերով կանգնում են ընդհանուր հրամանատարի՝ մեծավորի դրոշի տակ: Առաջին հերթին պահակակետեր են դրվում բոլոր կարևոր լեռնանցքներում՝ Սբ Խաչ, Մեծ լեռ, Հողմասարեր, Կարմիր Հովիտ, Ջաֆրանափոս, Երևանող, Ձիաբակ, Սրբերի Վարդանաց զորավարաց մատուռ և այլն: Ուժեղացվում է Ձոր դռան մշտական պահականոցը: Ոտքի են հանվում նաև մեծավորի գաղտնի գործակալները, որոնք օպերատիվ կերպով իրազեկ էին պահում նրան Դուրսուն բեգի նույնիսկ աննշան տեղաշարժերի մասին[27]:

Դուրսուն բեգի դեմ պատերազմի մասին տեր Կարապետ Չախալյանը հունուտցի Յաֆուզայի միջոցով լուր է ուղարկում Թիֆլիսում գտնվող խոտորջուրցիներին,որոնք Բերդագրակ-Արդահան-Ախալքալաք-Մանգլիս ճանապարհով 5 օրում հասնում են Թիֆլիս: Թիֆլիսի խոտորջուրցի հացագործների «ուստաբաշին», ստանալով նամակը, ժողով է գումարում 300 հացագործների մասնակցությամբ, որոնք հավանություն են տալիս ընդհանուր ժողովի որոշմանը: Չնայած, որ մեծավորի նամակի մեջ հստակ ասվում էր, որ օգնության կարիք չկա, այսուհանդերձ խոտորջուրցի հացթուխներից Քերոբ Ոսկանյանը և մի քանի այլ երիտասարդներ հայտնում են գյուղ վերադառնալու և ինքնապաշտպանությանը մասնակցելու որոշման մասին[28]:

1886 թ. ամռանը Դուրսուն բեգը սկսում է իր արշավանքը: Նա առաջին հերթին արշավում է Խոտորջուրի անմիջական հարևանների՝ Կարմիրք, Կուդրաշեն, Ծետկունց և Մոխորկուտ գյուղերի վրա, պարտադրում նրանց ընդունել իր իշխանությունը: Պատանդ վերցնելով մի քանի հայտնի ծերունիների՝ նա

[26] ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 17(1), էջ 36:
[27] ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 17(1), էջ 34-35:
[28] Նույնը:

շարժվում է դեպի Խոտորջուր: Տեղեկանալով հայության ինքնապաշտպանական միջոցառումներին և հասկանալով, որ բաց կռվում պարտություն է կրելու, քանի որ Խոտորջուրի մահմեդական հարևաններ Հունգամեքը, Քարեկամուրջը և Իսաձորը հրաժարվել են իրեն աջակցելուց՝ Դուրսուն բեգը դիմում է խորամանկության[29]: Խորհրդակցելով իր օգնական լազ Աբդուլահ Մամուշօղլիի հետ՝ նրանք որոշում են գաղտագողի սողոսկել մեծավորի տուն, գերել նրա հարազատներին և այդպիսով առավելություն ստանալով՝ նոր միայն բանակցել խոտորջուրցիների հետ: Աբդուլահը պատկերավոր ասում էր. «Պատրաստվում ենք առյուծի բերանից ատամ քաշել»[30]:

Խոտորջուրի ղեկավարությանը մոլորեցնելու համար Դուրսուն բեգը Աբդուլահի հարազատ եղբորը՝ Սուլթանին, հարևան գյուղերի հայ պատանդների հետ հրամայում է ներկայանալ մեծավոր տեր Կարապետին՝ իբր խնդրելու, որ բոլոր հարցերը լուծվեն բացառապես խաղաղ ճանապարհով: Ինքը՝ Դուրսուն բեգը, Աբդուլահի և 16 ավազակների հետ դուրս է գալիս Մոխորկուտից և որոշում մտնել Միջին թաղ՝ մեծավորի հայրենի գյուղը: Դուրսունին հայտնի էր, որ մեծավորը գտնվում է Ճիճապաղում, ուստի նրանց հաջողվում է գաղտագողի շարժվել առաջ՝ առանց բացահայտվելու, հասկանալով նաև, որ իր գործողության հաջողությունը կախված է անաղմուկ և աննկատ տեղ հասնելուց: Սակայն մեծավորի տուն չհասած՝ նրա դեմն է կտրում Թիֆլիսից վերադարձած Քերոբ Ոսկանյանը: Բեգը փորձում է Քերոբի հետ զրույցի բռնվել, իսկ ուղեկիցներին հրամայում շրջապատել նրան: Քերոբը կանխում է նրանց ու առաջին իսկ կրակոցով սպանում Դուրսուն բեգին, և ապա անհավասար կռվում ինքն էլ նահատակվում[31]: Այդ միջոցին վրա են հասնում Միջինթաղի պաշտպանական ուժերի մարտիկները[32]: Առանց հրամանատարի մնացած ավազակները, օգտվելով մթությունից, փախչում են Մոխորկուտ՝ ավազակապետի դիակը թողնելով Միջինթաղում:

Մեծավորը հրամայում է Դուրսուն բեգի դիակը հանձնել հարազատներին: Երբ ամեն բան խաղաղվում է, Դուրսունի հայրը Աբդուլահ Մամուշօղլիի ուղեկցությամբ գալիս, տեր Կարապետից ստանում է որդու դին, որը տանում և հուղարկավորում է Ռիզեյում[33]:

Այսպիսով, Դուրսուն բեգի ավազակախմբի թալանիչ գործունեությունը ևս դադարեցվում է ավազակապետի ֆիզիկական ոչնչացմամբ: Պայքարի այս

[29] ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 17(1), էջ 39:
[30] ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 17(1), էջ 40:
[31] ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 17(1), էջ 41-44:
[32] Տե՛ս **Գևորգյան Թ.**, նշվ. աշխ., էջ 212:
[33] ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 17(1), էջ 44:

դրվագը ևս ցույց է տալիս, որ հանուն խաղաղության մեծամեծ նյութական զրկանքներ կրելով՝ խոտորջուրցին պատրաստ չէր զոհաբերելու իր ազատությունը և ամեն ինչ կաներ հանուն այդ ազատության պահպանման:

***Եզրահանգում.*** Էրզրումի վերնախավը փորձում է նոր ավազակախմբեր հանել Խոտորջուրի դեմ, սակայն Աբդուլահ Մամուշօղլին, Հյուսեին բեգի արբանյակներից Կակալօղլին և ուրիշ հայտնի ավազակներ մերժում են: Աբդուլահը սերտ բարեկամական հարաբերություններ է հաստատում Խոտորջուրի հետ, դառնում հայերի անդավաճան բարեկամը, իրեն հավատարիմ լազերի գլուխ անցած որոշ վարձատրությամբ ապահովում Ռուսաստան մեկնող խոտորջուրցիների անվտանգությունը: Չնայած լինում էին նաև դեպքեր, երբ լազերից կազմված մանր ավազակախմբեր խանգարում են Խոտորջուրի անդորրը: Մասնավորապես, 1890թ. ապրիլի 22-ին 7 լազ ավազակ պաշարում են Խոտորջուրի Կաղմխուտ գյուղի եկեղեցին, սպանում քահանա տեր Պետրոսին, ապա, թալանելով գյուղը, հեռանում Պարխարյան լեռների ուղղությամբ[34]: Այսուհանդերձ, նշված միջադեպը բացառություն էր, և Դուրսուն բեգի ջախջախումից հետո Խոտորջուրում խաղաղություն էր տիրում: Անգամ 1895-1896թթ. Արհավիրքների օրերին Աբդուլահ Մամուշօղլին և իր ընկերները՝ համշենցի Կոպալօղլիները, զինված ջոկատով գալիս են Խոտորջուր և արգելում Սպերում հավաքված թուրք խուժանին մտնել գյուղախումբ, ինչի շնորհիվ Խոտորջուրը նյութական կորուստներ չի ունենում:

## БОРЬБА ХОТОРДЖУРЦЕВ ПРОТИВ РАЗБОЙНИЧЬИХ ГРУПП ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIX ВЕКА

***Акопов А. А.***

**Ключевые слова**: *Хюсейн бег, Дурсун бег, лазы, староста, Тер Карапет Чахалянц, Тайк, армяне-католики.*

Хоторджур, или Хоторджурская община – группа сел с армяно-католическим населением, которая во второй половине XIX века входила в состав Кискимской казы (округ) Эрзурумского вилайета Османской империи. С согласия Эрзурумского губернатора, в 1878г. против Хоторджура был брошен известный разбойник Шарифогли Хуссейн бек, который терроризировал не только Хоторджурцев, а также население всего Кискимского района. Хоторджурцам никак не удавалось законным путем ликвидировать банду Хуссейн бека. Даже после того,

[34] Տե՛ս «Նոր դար», Թիֆլիս, 1890, N 73, էջ 3:

как его арестовали и осудили, армянскому населению не стало легче, так как ему с подельниками удалось сбежать и вновь заняться разбоем и грабежом. Исчерпав все законные пути, хоторджурцы пошли не традиционным путем. Мецавор подкупил одного из ближащих сподвижников Хуссейн бека, который отрубил голову бека и передал Мецавору.

В 1880-х Эрзурумский губернатор против Хоторджура отправил помощника Хуссейн бека - Туйлоглы Дурсун бека. Он нашел новый путь грабежа Хоторджура, принуждая армян покупать у него контрабандные товары – безакцизные сигареты и тп.. В 1886 г. Дурсун бек потребовал у Хоторджура признать его правителем общины. Однако армяне решают начать сопротивление. Дурсун бек решает взять в заложники членов семьи Мецавора, для того чтобы в переговорах с армянами иметь перевес. Однако его план срывается. На пути к дому Мецавора он натыкается на члена самообороны Хоторджура – Кероба Восканяна, который застреливает Дурсун бека, после чего сам погибает в неравном бою. Группировка Дурсун бека, лишившись предводителя, оставляет Хоторджур в покое. Эрзурумский губернатор обращается к помощнику Дурсун бека – Абдулле Мамушоглы, чтобы тот возглавил группировку Дурсун бека против Хоторджура, однако Мамушоглы отказывается. Вместо этого он устанавливает дружеские отношения с армянами, всячески поддерживает их своей дружиной состоящей из лазов. Во время резни армян 1895- 1896 гг. Мамушоглы совместно с Копалоглы из Амшена защищает Хоторджур от турецких бандитов.

## THE STRUGGLE OF KHOTORJOURIANS AGAINST THE ROBBER GROUPS IN THE SECOND HALF OF THE 19TH CENTURY

*Akopov A. A.*

**Key words**: *Hussein Bey, Dursun Bey, the Lazes, metsavor, Ter Karapet Chakhalyants, Tayk, Catholic Armenians.*

Khotorjour, a group of villages with Armenian-Catholic population, in the second half of the 19th century was part of the Kiskim kaza (district) of the Erzurum vilayet of the Ottoman Empire. With the consent of the governor of Erzurum, in 1878 a famous criminal Sharifogli Hussein Bey was thrown against Khotorjour. His group terrorized not only the Armenians, but also the population of the whole Kiskim district. The Khotorjourians could not in any legally way succeed in the liquidating

the Hussein Bey gang. Even after he was arrested and convicted, the Armenian population did not feel any better, since he and his accomplices managed to escape and again get engaged in robbery. Having exhausted all legal ways, Khotorjourian Metsavor bribed one of the closest associates of Hussein Bey, who cut off the head of Hussein Bey and gaved it to Metsavor.

In the 1880s Hussein Bey's assistant Tuylogli Dursun Bey was sent by the Governor of Erzurum against Khotorjour. He found a new way of plundering Armenians, compeling them to buy smuggled goods. In 1886, Dursun Bey demanded that Khotorjour should be recognized as the ruler of the community. However, Armenians make a decision for resisting. Dursun Bey decides to take hostages the members of the family of Metsavor, in order to have an advantage in negotiations with the Armenians. However, his plan fails. On the way to Metsavor's house, he stumbles upon a member of the Khotorjour self-defense - Kerob Voskanyan, who shoots Dursun Bey, after which he dies in an unequal battle. The grouping of Dursun Bey, having lost his leader, leaves Khotorjour alone. The governor of Erzurum appeals to the assistant of Dursun bey, Abdulla Mamushogli, to head the group of Dursun bey against Khotorjour, but Mamushogli refuses. In the place of this, he establishes friendly relations with the Armenians, in every possible way supports them with his team composed of Laz. During the massacre of Armenians in 1895-1896, Mamushogli, together with Kopalogly from Hamshen had protected Khotorjour from Turkish gangs, which were concentrated in the neighboring Ispir and were preparing to invade Khotorjour.

## References


1. **Alishan GH.** Teghagir Hayots' metsats', Venetik, 1856 **(In Armenian)**.
2. **Gevorgyan T'.** Khotorjur, Banber Yerevani hamalsarani,1971,№ 3 **(In Armenian)**.
3. Hayastani azgayin arkhiv, f: 1407 **(In Armenian)**.
4. **Inchichean Gh.** Ashkharhagrut'iwn ch'orits' masants' ashkharhi, mas A, h. A, Asia, Venetik, 1806 **(In Armenian)**.
5. **Kostandyan E.** Arevmtyan Hayastani hayabnak vayreri veraberyal G.Srvandzt-yani kazmats vicha-kagrut'yunnerits', «Banber Hayastani arkhivneri», 1976, № 2 **(In Armenian)**.
6. Nor dar, T'iflis, 1890, N 73 **(In Armenian)**.

7. Osmaluri vrtseli da mok'le davtrebi tao-klarjetis shesakheb (XVI-XVIII saukuneebi), osmaluri teksti kartuli targmanit, shesavlit, mtsire shenishvnebita da paksimileebit gamosatsemad moamzada prop'. Nodar Shengeliam, Tb., 2013 (**In Georgian**).
8. Teghagrut'iun Khotrjroy, Bazmavep handisaran, Venetik, 1875, h. LG (**In Armenian**).
9. **Yerits'yan A.** Mi yeres Karnoy noragoyn patmut'iunits', P'ordz, Tp'khis, 1878, N 1 (**In Armenian**).

*Ընդունվել է՝18.03.2020*
*Գրախոսվել է՝ 04. 05. 2020*
*Հանձնվել է տպ.՝27. 05. 2020*

**Տեղեկություններ հեղինակի մասին**
**Արկադի ԱԿՈՊՈՎ՝** պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտքարտուղար,
էլ. հասցե՝ arkadone@mail.ru